

Տեառն Յակոբայ Աստուածաբան կոչեցելոյ,
 եւ Վեհափառ Պատրիարքին Բիւզանդիոյ:
 Որ էր յաջորդ Տն. Յովհաննու Բաղիշեցւոյ,
 Քաջաքարով Պատրիարքին գերյարգելոյ:
 Լեալ հեղինակ բազում զրեանց ազգիս մերոյ,
 Պայծառացաւ յոգն երախտիւք այրս յարզոյ:
 Քսաներիք ամօք եկաց դէտ այս Պօլսոյ,
 Տեղեալ գոլով Զիմառացի բարեբարոյ:
 Այն որ ի կեանս էր ձայն կենաց իբր զփողոյ,
 Ննջէ լոկի լեալ տրժանի յիշման բարւոյ:

Հանգեալ ի ՌՄԺԳ յուլիսի 19»

(Բագմ. 1928, Նոյ.-Դեկտ. Թիւ 11-12, էջ 342):

Նալեան նշանաւոր է ոչ միայն վարչական կարողութիւններով, այլ նաեւ ընտիր դասախօս մը եղած է Գուժ գափուի Պատրիարքական Մայր դպրատան մէջ զոր ինքը հաստատած էր. և անուանի էր իբր հմուտ աստուածաբան և հեղինակ կրօնական երկերու օրք են. Վեհ Հաւասոյ (1733), Քրիստոնեական մը (1737) աշխարհաբար լեզուով. Մեկնութիւն Նարեկի (1745), Հոգեշան (քերթուածը) (1746), Գանձարան Ծանուցմանց (1758). Գիրք Աղօթից (1760): (Ընդօր. 1901. էջ, 145): Նալեանի աշխարհաբար երգերուն մասին (Տե՛ս Քնար, էջ 141—142): Ա. Յակոբի մատենադարանին մէջ կը գտնուի Նալեանի երուսաղէմի պատրիարքութեան օրով գրուած նամակներու հաւաքածոն (ՄԶ. Թ. 1002): Նալեան այս հաւաքածոյէն զատ ունի հետեւեալ անտիպ երկերը որ կը գտնուին Ա. Էջմիածնի Մատենադարանին մէջ. Մեկն. եօթն խորհրդոց եկեղեցւոյ (Էջմ. Ցուց. Թ. 1430, ՌՄԺԶ (= 1767) Թուին. Աստուածաբանական կրթութիւն (Անդ. Թ. 132) ՌՄԺԹ (= 1770). Աւագ Ուրբաթի կսակը ընդօրինակուած Գանձակեցի Մեսրոպ վրդ.ի ձեռամբ՝ Տաթևացի Գրիգոր վրդ.ի Աւրիստոտէլի Ստրագրութեանց վերլուծութեան ձեռագիրին մէջ (Անդ. Թ. 1905). Քարոզգիրք Կիւրակից (Անդ. Թ. 2161) ՌՄԽԶ (= 1797) Թուին. զատ ընդօրինակութեամբ 113 Քարոզներու հաւաքածոյ մը, սկիզբը Միւռնոնի օրհնութեան ձառով մը (Անդ. Թ. 2163). Մեկն. Սիրաֆայ (Անդ. Թ. 1142), ընդօրինակուած Ծաղիկ մականուանեալ Աստուածատուր զրիչին ձեռքով ՌՄԷ (= 1758) Թուին. (տպ. 1821, Միջագիւղ Պրէսի): Ա. Յակոբի նուիրած